



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Վարդապատի Չորրորդ Կիրակի

29 ՅՈՒՆԻՍ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(58.13-59.7)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-
«Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

Միթէ կը կարծէք թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ահանջը, որպէսզի ձեզ չլսէ: Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ խրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ, այնպէս՝ ինչպէս ձեր անօրէնութիւններուն պատճառով Աստուած երես դարձուց եւ չորրորմեցաւ ձեզի: Որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով պղծուած են եւ ձեր մատները՝ մեղքով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան: Չկայ մէկը որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը որ իրաւունքով դատ տեսնէ. դուք ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր լարած դաւերը քարերու հակիրթներ են, որոնցմէ ուտել ուզողը մահ կը գտնէ, որովհետեւ ի՞՞նչ անոնց մէջինը: Ձեր հիւսած դաւերը սարդի ոստայն են, որոնցմէ հագուստ չ'ելլեր եւ բանի չեն ծառայեր: Դուք բնաւ չէք կրնար արդարանալ ձեր գործերով, որովհետեւ ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը

սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՏԻՄՈԹԷՈՍԻՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(4.12-5.10)

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ որ մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին քու վրայ: Այս ըսածներուս մասին խորհէ եւ զանոնք գործի վերածելու աշխատէ, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղիր թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այսպէս մնա՛, գիտնալով որ այդ ձեւով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ձեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատուէ եւ խնամէ ա՛յն այրիները որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը զաւակներ ու թոռներ ունի, պէտք է անո՛նք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին այն է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր

որպէսզի անարատ ըլլան: Իսկ մէկը որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն ա՛յն կիները որոնք վաթսուներ անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ գաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղուժեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(3.13-21)**

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ ղրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ

Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ:

չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

«Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ

անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

...ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ...

ՏՆՕՐՀՆԷՔ
Տնօրհներ փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 քիփն:

ՀԻՒԱՆԴԱԵՐՈՒՄ ԱՅԾԵԼՈՒԹԻՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քհնյ. Գոյունեանի.
514 909 5203 քիփն:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԻՆԵՐՈ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵԾԷ ԿՊՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՄ ԴԻՒԱՆԱՏՈՒՄ:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԵԿԵՂԵՅԻՄՅԱ ԴԻՒԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՄԸ յԱՅՏԵԾԷՔ (like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal
ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԱՁԵՒ
Ս. ՅԱՎՈՔ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՄ ԿԱՔԷՁԸ՝
www.sourphagop.net